ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայերի քաղաքակրթական հետքը

Արժեքավոր մենագրություն՝ ընդդեմ պատմական զեղծարարությունների

Լուսինե ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում նախօրեին տեղի ունեցավ պատմական գիտությունների դոկտոր **Համիկ Ստեփանյանի** «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» մենագրության շնորհանդեսը: Այն նվիրված է Թուրքիայի հայոց պատրիարքարանի հիմնադրման 550-ամյակին (1461-2011թթ.): Նշենք, որ գրքի հրատարակումն իրականացվել է ՀՀ վարչապետ **Տիգրան Սարգսյանի** եւ Աժ նախկին նախագահ **Հովիկ Աբրահամյանի** հովանավորությամբ:

Մենագրությունը ներկայացնում է հայերի ունեցած ներդրումը Օսմանյան կայսրության պալատական, դիվանագիտական, դասական, վարչական բնագավառներում, բանակում եւ բանկային, արդյունաբերական, ապահովագրական համակարգերում, ինչպես նաեւ բժշկության, քաղաքաշինության, արհեստների, գիտության, սպորտի, մշակույթի տարբեր ոլորտներում եւ երկրի տնտեսության համար նոր ձեւավորվող կարեւորագույն ճյուղերում:

Համիկ Ստեփանյանը «ՀՀ»-ի թղթակցի հետ զրույցում նշեց, որ մենագրության թեման ինքնին պարտադրում էր անդրադառնալ կյանքի բոլոր ոլորտներին: Այդ առումով չափազանց կարեւոր էր օգտվել այդ ժամանակաշրջանի տարբեր աղբյուրներից, ինչպես, օրինակ, ցարական Ռուսաստանի կայսրության աշխարհագրական ընկերության արխիվներից, որի հատուկ խմբերն այդ ժամանակ երկրաբանությամբ են զբաղվել Օսմանյան կայսրության տարածքում: Հեղինակն օգտվել է Թուրքիայի արխիվային փաստաթղթերից, որտեղ տեղեկություններ կան կայսրությունում հայերի ունեցվածքի՝ հող, անշարժ գույք, հիվանդանոց եւ այլնի մասին, ինչպես նաեւ Երուսաղեմի տնօրինական հողերը հայերին պատկանելու մասին սուլթանների հրովարտակները: Գրքում հարուստ նյութեր կան նաեւ եվրոպական կաթոլիկ համալսարանների կաթոլիկ եւ բազմալեզու այլ աղբյուրներից: Հ. Ստեփանյանն ընդգծեց, որ տպագրական, հրատարակչական ասպարեզը, հայատառ թուրքերեն ինքնուրույն եւ թարգմանական գրականությունն անմիջական ազդեցություն են ունեցել թուրք նոր գրականության եւ նրա լուսավորիչների սերնդի ձեւավորման, թուրքերեն գրական լեզվի, թատրոնի, դրամատուրգիայի, լրագրողական ոլորտների ձեւավորման եւ զարգացման մեջ:

Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Ռուբեն Սաֆրաստյանը** նշեց, որ օսմանյան պետականության պատմության մեջ հայերի ունեցած ներդրումը եւ նվաճումներն արվել են հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային ողջ ներուժի հաշվին՝ հակադրվելով Օսմանյան կայսրության քաղաքականությանը: Նա վստահություն հայտնեց, որ գիրքը լայն արձագանք կունենա ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրի գիտական շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների բաժանմունքի վարիչ, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանի** կարծիքով, պատմագիտական նյութերով հարուստ գիրքը կարող դառնալ հետագա ուսումնասիրությունների աղբյուր: Սակայն շատ հարցեր դեռ չեն ստացել իրենց պատասխանը. օրինակ՝ ինչո՞ւ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությունը մի պետության կողմից, որի քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում հայերն ունեին մեծ դերակատարություն:

Արսեն եպիսկոպոս **Բերբերյանի** համար նույնպես մտորումների եւ ուսումնասիրությունների հարց է, թե ինչպե՞ս եղավ, որ հայերի ունեցած հարաբերությունները թուրք մեծամեծերի հետ եւ հայ ժողովրդի ունեցած կշիռն այդ պետության մեջ, դեր չխաղաց եւ տեղի ունեցավ անշրջելին:

Հանրային խորհրդի նախագահ **Վազգեն Մանուկյանի** համոզմամբ, պատմությունն ամենահզոր զենքն է առաջ գնալու, իսկ «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» մենագրությունն այդ զենքերից մեկն է: Այնտեղ ներկայացված հարուստ փաստագրական նյութը հպարտության զգացում է առաջացնում ամեն հայի սրտում, առանց որի հնարավոր չէ հաջողություններ ունենալ: *«Մենք աշխարհի վրա ազդեցություն ենք ունեցել ոչ թե մեր պետությունով, այլ ժողովրդով եւ համաշխարհային քաղաքակրթության վրա ունեցած մեր ազդեցությամբ»,-* ասաց նա:

Գրող, կինոքննադատ **Դավիթ Մուրադյանի** խոսքով, ժամանակն է, որ աշխարհը մեզ ճանաչի ոչ միայն երկրաշարժով, ցեղասպանությամբ եւ հակամարտությունների մեջ ընդգրկված լինելով, այլ տարբեր երկրների եւ համաշխարհային քաղաքակրթության մեջ ունեցած հայ մարդու եւ հայ ժողովրդի անգերագնահատելի դերով եւ ավանդով: *«Հայ ժողովրդի մասին գիտելիքների տարածումը հնարավորություն կտա ընդլայնելու եւ ամրապնդելու մեր տեղը եւ դերն աշխարհում: Յուրաքանչյուր ժողովրդի սահմանները որոշվում է ոչ թե աշխարհագրական, այլ իր մշակույթի, ստեղծարար ներկայության սահմաններով»,-* նշեց նա:

Ներկաների համոզմամբ, ուսումնասիրությունը բացառիկ է իր ընդգրկման շրջանակով, ծավալով, փաստական, աղբյուրագիտական նյութով: Այն կոչված է լրացնելու հայ ժողովրդի պատմության բազմաթիվ էջերից եւս մեկը, վերարժեւորելու եւ թրքացման, խեղաթյուրման սպառնալիքից փրկելու մեր պատմության եւ մշակույթի կարեւոր եւ անքակտելի մասը: Այդ առումով կարեւորվեց մենագրության հրատարակությունը նաեւ այլ լեզուներով: Ի դեպ, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ առաջիկայում նախատեսվում է գրքի ռուսերեն տարբերակի հրատարակումը:

Նշենք, որ Համիկ Ստեփանյանը շուրջ 40 տարի աշխատում է ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտում: Նրա աշխատությունները գլխավորապես նվիրված են հայատառ թուրքերեն մշակույթին՝ ձեռագիր, տպագիր գրականությանը, պարբերական մամուլին, նրա երախտավորներին, հայ-թուրքական մշակութային հարաբերություններին եւ երկրի տարբեր ասպարեզներում նրանց համագործակցությանն ու վերարժեւորմանը:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռոբերտ Գալոյան

ՊԵԿ–ի նախագահի տեղակալ

Ռոբերտ Գալոյանը ծնվել է 1964 թվականի հունվարի 30-ին, քաղաք Երեւանում: 1981 թ. ավարտել է Երեւանի թիվ 10 միջնակարգ դպրոցը: 1985 թ. ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի աշխատանքի էկոնոմիկա եւ կազմակերպում ֆակուլտետը:

1985-1991 թթ. աշխատել է Երեւանի էլեկտրատեխնիկական գործարանում՝ որպես տնտեսագետ: 1991-2012 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում, նախ՝ որպես տեսուչ, այնուհետեւ՝ 1997 թ. եղել է հարկային պետական տեսչության պետի աշխատակազմի ղեկավար, Սպանդարյանի հարկային տեսչության պետ, օպերատիվ հետախուզության վարչության պետի տեղակալ: 2009 թ. նշանակվել է օպերատիվ հետախուզության վարչության պետ: 2012 թ. փետրվարի 10-ին նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ: Հարկային ծառայության գնդապետ է: Ամուսնացած է, ունի երկու որդի:

ՀՀ դեսպանը հանդիպել է Լիտվայի ազգային պաշտպանության նախարարի հետ

Փետրվարի 9-ին Լիտվայում ՀՀ դեսպան **Արա Այվազյանը** հանդիպեց Լիտվայի ազգային պաշտպանության նախարար **Ռասա Յուկնեվիչիենեի** հետ, հայտնում են *ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից*:

Հանդիպման ընթացքում երկուստեք անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Լիտվայի միջեւ բարեկամական հարաբերություններին, գոհունակություն հայտնվեց երկու երկրների պաշտպանության նախարարությունների միջեւ առկա գործակցության կապակցությամբ եւ կարեւորվեց միջգերատեսչական շարունակական համագործակցության խորացումը:

Կողմերը քննարկեցին արտաքին եւ տարածաշրջանային օրակարգի, ինչպես նաեւ միջազգային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր:

Դեսպանի խնդրանքով նախարար Յուկնեվիչիենեն ներկայացրեց Լիտվայի գործունեությունը միջազգային կազմակերպությունների շրջանակներում, ինչպես նաեւ բալթյան երկրների համագործակցությունը սկանդինավյան տարածաշրջանի հետ պաշտպանական ոլորտում:

Դեսպանը տիկին Յուկնեվիչիենեին փոխանցեց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրավերը՝ այցելելու Հայաստան, ինչը գոհունակությամբ ընդունվեց:

Հրայր Թովմասյանը հետեւում է կառավարության քաղաքական գծին

Սկիզբը՝ էջ 1

Ուսանողների հետ հանդիպման ժամանակ արդարադատության նախարարը իր ելույթում մի քանի անգամ վկայակոչեց Գարեգին Նժդեհին, մեջ բերեց նրա մտքերը: Հաշվի առնելով վերջին օրերին մամուլում շրջանառվող համառ լուրերը, թե Հրայր Թովմասյանը պատրաստվում է անդամագրվել հանրապետական կուսակցությանը եւ նրա կողմից Նժդեհին պարբերաբար մեջբերելը (Հանրապետական կուսակցության գաղափարախոսության հիմքում ընկած է Նժդեհյան ուսմունքը), ուսանողների հետ հանդիպումից հետո «Panorama.am»-ը նախարարից հետաքրքրվեց, թե հնարավո՞ր է, որ, այնուամենայնիվ, Թովմասյանը անդամագրվի իշխող կուսակցությանը:

Ի պատասխան, նախարարն արձագանքեց. *«Ես նման որոշում դեռ չունեմ: Մեր կառավարությունը քաղաքական կառավարություն է, եւ ես կառավարության կազմում ընդգրկված եմ հանրապետական կուսակցության քվոտայով: Այն, որ ես այս պահին կուսակցության անդամ չեմ, դրանով շատ քիչ բան է փոխվելու, որովհետեւ մեծ հաշվով իրականացնում եմ հանրապետության նախագահի եւ կառավարության քաղաքական գիծը: Որքան էլ ես պրոֆեսիոնալ լինեմ, այնուամենայնիվ, ես այդ գծից չեմ շեղվում: Այնպես որ, հանրապետական դառնալով կամ չդառնալով մեծ բան չի փոխվելու, որովհետեւ ես այդ գիծն եմ տանում»*:

Ինչ վերաբերում է Նժդեհին վկայակոչելուն, նախարարն ասաց, որ Նժդեհին կարդում է շատ վաղուց: *«Մեր պատմության մեջ Նժդեհը այն մարդկանցից մեկն էր, որը կարողացավ ամփոփել անցյալը՝ որոշակի դիագնոզներ դնել եւ ցույց տալ շարունակությունը: Նժդեհը արժեհամակարգ է, գաղափարախոսություն է, հարստություն է եւ, անկախ կուսակցական պատկանելությունից, պետք է հետեւել»*:

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Ֆրանսիան ո՛չ առաջինն է, ո՛չ՝ վերջինը

Ըստ Թեսա Հոֆմանի՝ Թուրքիային չի հաջողվի անդադար խուսափել սեփական անցյալից

Ալլա ՍԵՐՈԲՅԱՆ

Հայոց ցեղասպանության շուրջ հուզումները Եվրոպայում շարունակվում են ալեկոծվել. ի՞նչ է սպասվում Ֆրանսիայում հայտնի օրինագծին, դեռ որքա՞ն է Թուրքիան դիմանալու այս ալիքին:

Ի դեպ, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը «ազգայի երկխոսություն» նախաձեռնության շրջանակներում ապրիլի 15-ից հետո անդրադառնալու է իրեն ուղղված առաջարկներին եւ հարցերին, որոնք ընտրվելու են ինտերնետային քվեարկության արդյունքների հիման վրա: Մերկելին է ներկայացված նաեւ հայերի եւ ասորիների ցեղասպանության հերքումը օրենքով կարգավորելու մշակված առաջարկ: Այն կանցլերին ներկայացված շուրջ 2500 առաջարկների շարքում ստացած քվեների թվով լավագույն տասնյակում է (երեկվա դրությամբ):

Ցեղասպանության հերքումը՝ հանցագործության բաղկացուցիչ

Զարգացումների շուրջ «ՀՀ»-ն զրուցել է Բեռլինի Ազատ համալսարանի Արեւելյան Եվրոպայի ինստիտուտի գիտաշխատող, ցեղասպանագետ, «Ճանաչում աշխատանքային խումբ. ցեղասպանության դեմ, ժողովուրդների համաձայնության համար» մարդու իրավունքների կազմակերպության նախագահ, դոկտոր **Թեսա Հոֆմանի** հետ:

Ֆրանսիայում հայկական օրինագծի շուրջ զարգացումների մասով նա մեկնաբանեց, որ երկու պալատներից կազմված Ֆրանսիայի պառլամենտը դեկտեմբերի 23-ին եւ հունվարի 23-ին, այսպես ասած, երկրորդ ընթացքով թարմացրեց կամ ընդլայնեց Գեյսոյի օրենքը. *«1990-ին ընդունված օրենքը մինչ այս պատիժ էր սահմանում մարդկության դեմ գործած հանցագործության, մասնավորապես՝ Եվրոպայի հրեաների ոչնչացման հերքման համար»*:

Թ. Հոֆմանը մեկնաբանում է, որ ներկայիս օրինագիծը վերաբերում է Ֆրանսիայի կողմից ճանաչված բոլոր ցեղասպանություններին, որոնց թվում նաեւ հայերի ցեղասպանությունը. *«Այսպիսով, ցեղասպանության հերքողներին սպառնում է մեծ գումարի՝ 45 հազար եվրոյի տուգանք, սակայն միեւնույն ժամանակ ասորիների եւ հույների դեմ իրագործված հանցագործությունը կարող է անպատիժ հերքվել կամ արդարացվել, քանի որ դրանք ֆրանսիացի օրենսդիրների կողմից մինչ այս օրենքի ընդունումը չեն ճանաչվել: Նույնը վերաբերում է նաեւ 1948-ին իրագործված ցեղասպանություններին: Այդուհանդերձ, ցեղասպանության դեմ պայքարում հերքման դեմ օրենքի ընդլայնումը կարեւոր նպաստ է»*:

Գերմանացի գիտնականը համարում է, որ ցեղասպանության հերքումն այդ հանցագործության բաղկացուցիչն է եւ դրա վերջին աստիճանը, ինչպես Նոբելյան խաղաղության հրեա մրցանակակիր Էլի Վիզելն է բնորոշել՝ *«իբրեւ երկրորդ սպանդ»*. *«Հայկական համայնքը աշխարհով մեկ տասնամյակներ շարունակ տառապել է այդ երկրորդ սպանդից: Ավելի քան ժամանակն է, որ նրանք ազատագրվեն դրանից, գոնե մի երկրում, որտեղ կես միլիոն հայկական ծագում ունեցող մարդիկ են ապրում,*

ի դեպ, 400 հազար էլ՝ թուրքական»:

Ֆրանսիան առաջին եվրոպական երկիրը չէ, որը նման օրենք է նախաձեռնում. 2011-ի նոյեմբերին Սլովակիան նման ձեւով ընդլայնեց առկա հակամերժողական օրենքը, Իսպանիան մինչ այդ ԵՄ առաջին երկիրն էր ընդհանուր հակամերժողական օրենքով, Շվեյցարիան մեկ այլ ճանապարհով գնաց, որտեղ ցեղասպանության հերքման պատիժը բխում է հակառասիստական օրենքից. *«Հայացք նետելով եվրոպական իրավական պրակտիկայի վրա, նշեմ, որ Հայոց ցեղասպանության մասով մինչ այժմ առկա օրենքների հիմքով քրեական գործ է հարուցվել միայն Շվեյցարիայում եւ Գերմանիայում: 2007-ին թուրքական կուսակցության առաջնորդ եւ ձախ ազգայնական դոկտոր Դողու Փերինչեքը դատապարտվեց ցեղասպանության հերքման պատճառով այն բանից հետո, երբ նա Շվեյցարիայում եւ Գերմանիայում հրապարակային կերպով հերքում էր Հայոց ցեղասպանությունը: Գերմանական վարչական արդարադատությունը ստիպված էր 2006-ին փոխարինաբար կիրառել քրեական իրավունքի հոդվածը՝ «զոհերի հանգստի խանգարում» հասկացությունը՝ դադարեցնելու «Թալեաթ փաշա օպերացիայի» անկարգությունները»*:

Էրդողանն իր երկրին հաճույք չպատճառեց

Խոսելով գերմանական արձագանքներից՝ Թ. Հոֆմանը նախ արձանագրեց, որ գերմանական լրատվամիջոցների լուսաբանումները հարաբերականորեն զուսպ են այս հարցում. *«Սակայն այստեղ եւս, ինչպես Ֆրանսիայում, կան մտավորականներ, ովքեր դեմ են արտահայտվում հերքումը քրեականացնելու օրենքին՝ այն համարելով իբրեւ խոսքի ազատության սահմանափակում: Իսկ Թուրքիայի վարչապետն իր ճոռոմ, հուզականությամբ ղեկավարվող ելույթով իր երկրին հաճույք չպատճառեց: Գերմանական մամուլի որոշ մեկնաբանություններում այն քննադատության ենթարկվեց:*

Մյուս կողմից որքան ժամանակ է արդեն միտում կա միջազգային հրապարակումներում հայերի ցեղասպանության կապակցությամբ այնպես անել, կարծես խոսքը մի խնդրի մասին է, որը բացառապես Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ է, որոնց հակասական դիրքորոշումներն էլ սովորաբար առանց մեկնաբանության հրապարակվում են: Հաճախ չի հիշատակվում, որ գիտնականների հիմնական հոսքը՝ պատմաբաններ, ցեղասպանագետներ, խոսում են ցեղասպանությունից, եւ որ դեռ 1919-1920 թվականներին Օսմանյան կայսրությունում իրավական եւ քաղաքական բախում կար, որը խեղդվեց Մուստաֆա Քեմալի կողմից, եւ որ Գերմանիան դեռ 1921-ին Սողոմոն Թեհլերյանի դեմ դատավարության միջոցով առճակատվել է Օսմանյան կայսրությունում կատարված ցեղասպանության հետ»:

Թ. Հոֆմանը ներկայացրեց, որ նման օրենք Գերմանիայում նախաձեռնելու ընթացքն արդեն տրված է. նախագիծն ավելի քան երեք տարի է՝ Բունդեսթագի սեղանին է՝ մշակված «Ճանաչում աշխատանքային խումբ. ցեղասպանության դեմ, ժողովուրդների համաձայնության համար» կազմակերպության իրավաբանների կողմից: Սպասվում է, որ նամակների եւ բողոքների հանձնաժողովն առաջիկայում կտեղեկացնի ընթացքի մասին. *«Մեր այս նախագիծը նման է ֆրանսիական նախագծին, այսինքն՝ այն ընդլայնում է քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, Գերմանիայի դեպքում եւս՝ Հոլոքոստի հերքման մասին հոդվածը: Արդյոք մեր նախաձեռնությունը հաջողություն կունենա, կախված է խորհրդարանում քաղաքական պահանջներից եւ գնահատականներից»*:

Գերմանացի գիտնականը Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի սպասվելիք որոշման երեք տարբերակ է տեսնում՝ պատգամավորների դիմումի ամբողջական մերժում, ամբողջական ընդունում եւ մասնակի վերանայում: Նա այս դեպքում առավել հավանական է համարում վերջին երկու տարբերակները՝ միեւնույն ժամանակ նկատելով, որ մինչ այդ գործող Գեյսոյի օրենքը, սակայն, մնում է անձեռնմխելի. *«Հայկական օրենքի հեղինակը սա համարել է անընդունելի խտրականություն զոհերի պաշտպանության առումով, որի դեմ նա ցանկանում է մինչեւ վերջ պայքարել»*:

Թ. Հոֆմանը ցանկացած սցենարի դեպքում էլ հավաստացած է, որ Թուրքիան չի կարող անդադար խուսափել իր վիճելի անցյալի մշակումից, եթե նա ուզում է միջազգային հանրության մոտ իբրեւ ժամանակակից իրավական պետություն ընկալվել. *«Թուրքիայի քաղաքացիական հասարակության մեջ այս ընթացքում ավելանում են ձայները, ովքեր նման մշակում եւ պատասխանատվության ստանձնում են պահանջում»*:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ի նպաստ մասնագիտական կարողությունների ամրապնդման

Հայաստանը թրաֆիքինգի դեմ պայքարում առաջընթաց է գրանցել

Լիլիթ ԱՍԱՏՐՅԱՆ

Ժամանակակից ստրկությունը՝ թրաֆիքինգը, պետական սահմաններ չի ճանաչում: Այն արդիական է թե խաղաղ եւ թե ռազմական հակամարտությունների մեջ ներքաշված ժողովուրդների համար: Տարբեր աղբյուրների համաձայն՝ թրաֆիքինգի զոհ է դառնում տարեկան 2.5 միլիոնից մինչեւ 4 միլիոն մարդ: Եվրոպայի կազմակերպված հանցավորության մասին հրապարակված զեկույցի համաձայն՝ աշխարհում մարդկանց առեւտրի հետ կապված դրամական շրջանառությունն ամեն տարի կազմում է 8.5-12 միլիարդ եվրո: Ըստ էության թրաֆիքինգի զոհ են դառնում թե կանայք, թե տղամարդիկ եւ թե երեխաները: Դա կարող է լինել սեռական շահագործում, հարկադիր աշխատանք եւ այլն:

Թրաֆիքինգը համաշխարհային բնույթի հիմնախնդիր է: Բոլոր երկրները այդ թվում՝ եւ Հայաստանը, հետաքրքրված են, որ այն նվազի եւ աստիճանաբար վերանա: ՀՀ-ում մշտապես կատարելագործվում են թրաֆիքինգի եւ շահագործման դեմ պայքարի մեխանիզմները: Այդ մեխանիզմների կատարելագործմանն ուղղված քայլերից էր երեկ ԵԱՀԿ գրասենյակում իրավապահ մարմինների համար թրաֆիքինգի դեմ պայքարի ուսումնական ձեռնարկի ներկայացումը: Այս պայքարում իրավապահ մարմինների կարողությունների կատարելագործումը Հայաստանի թրաֆիքինգի դեմ պայքարի 2010-2012 թթ. ազգային գործողությունների ծրագրի գերակայություններից է: ԵԱՀԿ-ն եւ ԱՄԿ-ն աջակցում են կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը այս հարցում: Դատախազների, ոստիկանության, դատավորների, սահմանապահների ու աշխատանքային տեսուչների համար նախատեսված ձեռնարկը, ԵՄ ֆինանսավորմամբ, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի եւ ԱՄԿ գրասենյակի բազմամյա տարածաշրջանային ծրագրի շրջանակներում պատրաստել են ազգային 4 փորձագետներ: Նույն կազմակերպությունների աջակցությամբ 2011 թ. հրատարակված դասավանդողների վերապատրաստման մեթոդաբանության հետ մեկտեղ ձեռնարկը շարունակական վերապատրաստում կապահովի տարատեսակ կրթօջախներում:

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ **Կարել Հոֆստրան**, ներկայացնելով ձեռնարկը, ասաց, որ այն կարեւորվում է Հայաստանի թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ծրագրում: Ձեռնարկի շնորհիվ Հայաստանի իրավապահները կունենան միջազգային չափանիշներին բավարարող եւ Հայաստանի պայմաններին համապատասխան նյութեր: Այն կնպաստի նրանց մասնագիտական կարողությունների ամրապնդմանը: Կօգնի կանխելու մարդկանց թրաֆիքինգը, իսկ դրա զոհերին տրամադրելու անհրաժեշտ պաշտպանություն. *«Գիրքը կիրառական կլինի ոչ միայն իրավաբանների, այլեւ հասարակ քաղաքացիների համար, ովքեր կդառնան տեղեկացված ու կկարողանան դիմագրավել հնարավոր խաբեություններին»*:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Մնացական Սարգսյանը** ասաց, որ վերջին 5 տարիների ընթացքում մեր երկրում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարդու թրաֆիքինգի եւ շահագործման դեմ պայքարի խնդիրներին: Դրա մասին են վկայում կառավարության կողմից ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եւ իրավապահ մարմինների համատեղ դրական ու արդյունավետ աշխատանքը:

«Կարող ենք վստահությամբ ասել, որ աշխարհում ամենալուրջ մշակված համակարգն ունենք թրաֆիքինգի դեմ պայքարում, եւ դա գնահատվել է նաեւ միջազգային կառույցների կողմից: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի 2011 թվականի ամփոփ զեկույցում Հայաստանը թրաֆիքինգի առումով վտանգավորությամբ երրորդ խմբի պետությունների ցանկից հայտնվել է երկրորդ խմբի պետությունների ցանկում»,–ասաց Սարգսյանը՝ հավելելով, որ այդ ձեռնարկն էլ, իր հերթին, բաժանվելով հասարակական կազմակերպություններին ու իրավաբանական կենտրոններին, կնպաստի այդ բնագավառում հետագա հաջող պայքարի կազմակերպմանը:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Կարծրատիպերը կարծրությունը կորցնում են

Հերթական «Նա/Նե»-ները՝ նոր հասցեատերերին

Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սառնաշունչ ձմռան ջերմ պահեր՝ «Մոսկվա» կինոթատրոնում: Երեկ այստեղ ոչ թե ֆիլմ էին դիտում, այլ ռեպորտաժներ, որոնք րոպեներ անց արժանանալու էին «Նա/Նե» չորրորդ ամենամյա մրցույթի մրցանակին: Լրագրողական այս մրցույթը կազմակերպում են Բրիտանական խորհուրդը, ՀՀ–ում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը: Մրցույթն իրականացվում է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, «Վորլդ Վիժն Հայաստան» գրասենյակի եւ Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի հետ համատեղ:

«Ուրախ եմ, որ «Նա/Նե»-ն համընկավ Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի 10-ամյակի հոբելյանին: Ուրախ եմ, որ սիրվեց եւ դարձավ կայուն միջոցառում:

Հայ կինը հանրության կողմից միշտ մեծարվում է, բայց կնոջ կերպարը քաղաքականության, տնտեսության մեջ դժվարությամբ է ընկալվում: Եվ ահա այս նախաձեռնության նպատակը կնոջ եւ տղամարդու գործունեությունը հավասար տեսանկյունից դիտարկելն է»,–մրցանակաբաշխությունից առաջ կայացած ասուլիսի ժամանակ ասաց Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Արեւիկ Սարիբեկյանը**:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան **Քեթրին Լիչն** էլ համոզված է, որ ճկունությունն ու նորարարությունը կարեւոր են կարծրատիպերը կոտրելու համար. *«Միացյալ Թագավորության խորհրդարանում անկյունաքարային եղավ 1997թ., երբ ներկայացվեցին ցուցակներ, որոնցում գերակշռում էին կանայք»*:

Իսկ ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցիչ **Դաֆինա Գերչեւայի**, եթե խտրականության խնդրին լուծում չտրվի, ապա այն վտանգավոր կդառնա եւ կոտնահարի կանանց իրավունքները:

«Երկրի անցուդարձին կանանց ներգրավվածությունն այսօր կարեւոր է: Այժմ ապրում ենք մի աշխարհում, որը հիմնովին տարբերվում է մեր ծնողների, նախնիների աշխարհից: Այժմ հավասարությունը գիտակցում են: Դրական փոփոխություններ արձանագրվել են, բայց դեռեւս ճանապարհ ունենք անցնելու»,–կարծում է ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ժողովրդավարացման ծրագրի պատասխանատու **Օլիվեր Մակֆոյը**:

Իսկ այդ ճանապարհը որոշ չափով կրճատում է «Նա/Նե»–ն: Մրցույթին ներկայացված նյութերում բարձրացվում են քաղաքական, հասարակական եւ տնտեսական ոլորտներում կանանց գործունեությունը, ձեռքբերումներն ու խնդիրները եւ գենդերային բռնությունը՝ այս ամենը դիտարկելով տղամարդկանց եւ կանանց հավասարության տեսանկյունից:

Այս տարվա «Նա/Նե»-ն նշանավորվել է ոչ միայն նախորդ տարիների համեմատ ներկայացված նյութերի առավելագույն քանակով, այլեւ մրցանակների բազմազանությամբ: 136 հեղինակի ավելի քան 240 աշխատանքից 24-ն այս տարի արժանացան մրցանակների ավանդական եւ հատուկ անվանակարգերում: Առաջին անգամ մրցույթին ներկայացված պատմություններն առցանց ընթերցելու, քվեարկելու եւ իրենց մրցանակակրին ընտրելու հնարավորություն են ունեցել նաեւ հանրության ներկայացուցիչները: Հենց այդ նպատակով ստեղծվել էր «Նա/Նե» բլոգը, ուր տեղադրվում էին բոլոր նյութերը: